## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/47-Հ1

## 22.10.2021Թ ԿՆՔՎԱԾ ԹԻՎ ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/47 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «30» «01» 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Տաթև գիտակրթական համալիր>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Մկրտչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2021թ հոկտեմբերի 22-ին կնքված N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/47 գլխավոր գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 23.12.21թ թիվ 2121-Ն որոշումը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին՝

1.1.1 Հաստատել Պայմանագրով նախատեսված 2022թ համար ծառայությունների մատուցման Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը համաձայն թիվ 1 հավելվածի:

1.1.2 Հաստատել Պայմանագրով նախատեսված 2022թ-ին մատուցվող ծառայությունների դիմաց վճարման ժամանակացույցը համաձայն թիվ 2 հավելվածի:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայության հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի թիվ 1 և 2 հավելվածները համարվում են համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Ք. Երևան, Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011033447
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝

---------------------- Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

<<Տաթև գիտակրթական համալիր>> ՍՊԸ
Ք. Երևան, Կոմիտաս 49/2
Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2052822083911001
ՀՎՀՀ 00851528

Տնօրեն՝

---------------------- Ս. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**Հավելված N 1**
«20» 01 2022թ. կնքված
ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/47-Հ1 ծածկագրով համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| **Ծառայության** | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը* | չափման միավորը | ընդհանուր քանակը | ընդհանուր գինը /հազ. դրամ/ | Մատուցման | |
| | | | | | | | Վայրը | Ժամկետը |
| 1 | 79911100/1 | Պահուստում առկա պաշարների կառավարման ծառայություններ | Ծառայությունը նախատեսում է սփյուռքի համար ձեռքբերվող ուսումնական գրականության պահեստավորման և պաշարների կառավարման ծառայությունների մատուցում:<br>Պաշարների կառավարումը ընթադրում է.<br>1. Գրականության պատշաճ պահպանում<br>2. Ելքի ու մուտքերի գրանցում<br>3. Ելք արվող գրականության առանձնացում<br>4. Առանձնացված գրականության փաթեթավորում/արկղավորում և ստացողին տրամադրում<br>5. Ընդունման-հանձնման ակտերի ձևակերպում<br>6. Մուտք արվող գրականության հաշվառում և տեղավորում<br>**Գրականության պատշաճ քանակական և որակական պահպանման** նպատակով պահեստը պետք է բավարարի նվազագույն որոշակի տեխնիկական պայմաններին:<br>Պահպանության համար հատկացված փակ տարածքը պետք է լինի ոչ պակաս քան 130 մ2, մինչև 80000 կտոր գրականություն ազատ տեղավորելու համար՝ ապահոված ազատ օդի շրջանառությամբ: Տարածքում պետք է պահպանվի 18±2°C օդի ջերմաստիճանը և 55±5% հարաբերական խոնավորությունը: Գրականությունը պետք է պահպանվի պալետների վրա: Նախարարությունը պետք է հնարավորություն ունենա, ըստ անհրաժեշտության, | դրամ | 1 | 5000,0 | Ք. Երևան | Ծառայության մատուցումը սկսվում է համաձայնագիրն ուժի ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայության մատուցումը սկսել ավելի կարճ ժամկետում, մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | աշխատանքային կարգով ստանալու ընթացիկ տեղեկատվություն փաստացի մնացորդի վերաբերյալ կամ տեղում զննելու ուսումնական նյութերը: Իսկ եռամսյակը մեկ իրականացվում է տվյալների համեմատություն և մնացորդի համատեղ ամփոփում՝ արձանագրության միջոցով:<br>**Ելքերը և մուտքերը ձևակերպելու** նպատակով պետք է իրականացվեն համապատասխան գրանցում, հաշվառում, փաստաթղթերի ձևակերպում, ստացողների և բերողների հետ ընթացիկ աշխատանքային կապի իրականացում:<br>Գրանցման և հաշվառման համար անհարժեշտ է վարել Excell-ով աղյուսակ, դրանում արտացոլելով հետևալյ տվյալների մասին տեղեկությունները.<br>- Անվանում<br>- Հեղինակ<br>- Հրատարակչություն<br>- Պահեստավորման թվականը<br>- Գին<br>- Կշիռ<br>- Պահեստի տվյալները առաջին պահեստավորման պահին<br>- Մուտքեր<br>- Ելքեր<br>- Պահեստի ընթացիկ տվյալները:<br>Փաստացի ելքը (կամ մուտքը) իրականացվում է ընդունման-հանձնման ակտի հիման վրա, որը ստորագրությամբ վավերացվում է Նախարարության, Կազմակերպությության, ինչպես նաև ստացողի (կամ բերողի) կողմից: Հարկավոր է նկատի ունենալ, որ ստացողը (կամ բերողը) կարող է լինել թե՛ ֆիզիկական և թե՛ իրավաբանական անձ: Գրականությունը ստացողին տրամադրելու կամ բերողից ընդունելու գործընթացի համակարգումն իրականացվում է աշխատանքային կարգով՝ ընթացիկ կապ պահպանելով երեք վերոնշյալ կողմերի միջև:<br>**Գրականության փաստացի տրամադրման և ընդունման** նպատակով պահեստում իրականացվում է ուսումնական նյութերի առանձնացում՝ ըստ ընդունման-հանձնման ակտի, փաթեթավորում, բեռնում՝ տրամադրման դեպքում և բեռնաթափում՝ ընդունման դեպքում:<br>Փաթեթավորումն ապահովվում է պահեստային տարածքում՝ **մինչև 7 կգ-անոց** առանձին փաթեթներով՝ հարմարեցված ձեռքով ոչ երկար հեռավորությամբ տեղափոխելու համար:<br>Բեռնումը ենթադրում է բեռի տեղափոխում պահեստային տարածքից մինչև մեքենա:<br>Բեռնաթափումը ենթադրում է տեղափոխություն մինչև | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | պահեստային տարածք և տեղավորում պալետների վրա:<br>Գրականության տրամադրման կամ ընդունման ծառայությունը կատարվում է հիմնականում (բայց ոչ պարտադիր) հաջորդականությամբ. հունվար-հունիս (ներառյալ) ամիսներին գերազանցապես կատարվում է ընդունում, իսկ հունիս-դեկտեմբեր՝ գերազանցապես տրամադրում:<br>Առավելագույն ծանրաբեռնվածությունը դրսևորվում է հունիս-սեպտեմբեր ամիսներին:<br>Ֆիզիկական անձի կողմից գրականությունը տանելու դեպքում՝ այն տրամադրում է առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում: Տրամադրումը պետք է իրականացվի անխափան ամբողջ տարվա ընթացքում:<br>Հաղթելու դեպքում՝ Կազմակերպությունն իրականացնում է այս պահին Նախարարության տնօրինության տակ գտնվող շուրջ 45000 կտոր գրականության տեղափոխումն իր պահեստը Կոմիտաս 49/2 հասցեից: | | | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

----------------Վ. Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

----------------Ս. Մկրտչյան
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*« 20 » 01 2022թ. կնքված*
*ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/47-Հ1 ծածկագրով համաձայնագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **հրավերով նախատեսված չափաբաժնի համարը** | **գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)** | **անվանումը** | **դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ. ՀՀ պետական բյուջեից ըստ ամիսների, այդ թվում՝** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | Դեկտեմբեր, մինչև 30-ը | **Ընդամենը** |
| **1** | 79911100/1 | Պահուստում առկա պաշարների կառավարման ծառայություններ | | | | 1500000 | 1500000 | 1500000 | 3000000 | 3000000 | 3000000 | 5000000 | 5000000 | 5000000 | **5000000** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| ---------------------Վ. Գասպարյան | --------------------------------Ս. Մկրտչյան |
| /ստորագրություն/ Կ.Տ | /ստորագրություն/ Կ.Տ |